ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 12 ապրիլի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Պետրոսյանի
Անդամակցությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Վ. Պողոսյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Ստեփան Սահակյանի
անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Տ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Ստեփան Սահակյանը 26.03.2012թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածը, այդ թվում՝ այդ հոդվածին իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանությունը ճանաչել ՀՀ Սահմանադրության 1, 5, 6, 8, 18, 31 հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր»:

Դիմողը, ի թիվս այլ փաստարկների, գտնում է, որ վիճարկվող դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության 1, 6, 8, 31-րդ հոդվածներին, քանի որ իրավակիրառական պրակտիկայում չի ապահովվում սեփականության իրավունքի իրականացմանը պետության միջամտության համաչափությունը: Վիճարկվող դրույթը չի արտացոլում սեփականության իրավունքի պաշտ-

պանության համընդհանուր սկզբունքները, ինչը խաթարում է իրավական որոշակիության սկզբունքը, քանի որ օրենքի իրավական լինելը ենթադրում է այդ ակտում ժողովրդի կամքի արտահայտության առկայությունը եւ այլն:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով եւ ելնելով խնդրո առարկա անհատական դիմումի եւ կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրության արդյունքներից, գտնում ենք, որ դիմումի հիման վրա գործի քննությունը սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման հետեւյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ սահմանադրական դատարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածն օրենքին է վերապահել սահմանադրական դատարան դիմելու կարգի սահմանումը: Նշված հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը, նշված սահմանադրական դրույթին եւ դրա հիմքում ընկած կոնկրետ սահմանադրական վերահսկողության տրամաբանությանը համահունչ, սահմանել է ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները:

Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 17.03.2009թ. ՍԴՀՈ-21 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման՝ «...«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 1-ին մասում նշված որեւէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ»:

Խնդրո առարկա անհատական դիմումը չի բխում սահմանադրական կոնկրետ վերահսկողության էությունից, որտեղ էականն **անձի սահմանադրական սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունն է**, որոնք խախտվել են արդարադատության իրականացման գործընթացում հակասահմանադրական նորմի կիրառման արդյունքում:

Սույն գործի փաստական հանգամանքների վերլուծությունը վկայում է, որ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 04.11.2011 թվականի՝ հայցի ապահովման միջոցը վերացնելու մասին որոշմամբ վերացվել է ԵԿԴ/2315/02/11 քաղաքացիական գործով 30.09.2011 թվականի նույն դատարանի որոշմամբ ձեռնարկված եւ 14.10.2011 թվականի որոշմամբ ձեւափոխված հայցի ապահովումը:

Այսինքն՝ քաղաքացու իրավունքների խախտման փաստը, որպես այդպիսին, վերացվել է: Մինչդեռ սահմանադրական կոնկրետ վերահսկողությունը ենթադրում է, որ իրավունքի խախտումը պետք է կրի շարունակական բնույթ եւ այդ իրավունքի վերականգնումը հնարավոր չլինի դատական պաշտպանության այլ գործընթացների շրջանակներում: Այս համատեքստում է, որ իրավունքների **խախտման հանգամանքի առկայությունը** դիտարկվում է դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառման համատեքստում համակարգային փոխկապակցվածության մեջ: Հետեւաբար, գտնում ենք, որ սույն գործով դիմողը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետով, 69-րդ հոդվածի 1-ին մասով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացի Ստեփան Սահակյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

12 ապրիլի 2012 թվականի
ՍԴԴԿՈ/ 1-9